

Հաստատված է
 ՀԱՍԱՐԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ
 ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ամբիոնի նիստում
 (արձ. թիվ)
 ամբիոնի վարիչ՝

(ստորագրություն)

(ամիս ամսաթիվ)

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՓԻԼԻՍՓԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն /անվճար ուսուցում/
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ <ul style="list-style-type: none"> ▪ մասնաշենք ▪ հեռախոս ▪ էլ հասցե ▪ ▪ Web կայքի հասցե 	Քոլեջի Հասարակագիտական առարկաների և հոգեբանության <ul style="list-style-type: none"> ▪ ▪ 091956752, 094956752 ▪ melania.davtyan@mail.ru, ▪ melania.davtyan.police@gmail.com ▪ http://www.edupolice.am/
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Ոստ. կապիտան, ք.գ. թեկնածու Մ. Դավթյան
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	2017-2018 ուս. տարի, /2-րդ կիսամյակ/ 2018-2019 ուս տարի, /1-ին կիսամյակ/
ԿՐԵԴԻՏՆԵՐ	
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ	Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 68 ժամ, որից 34 ժամ դասախոսություն, 34 ժամ սեմինար: Դասընթացն ավարտվում է քննությամբ:
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ	Դասընթացը կառուցվում է բնագիտական և հասարակագիտական համընդհանուր գիտելիքների վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ՆՊԱՏԱԿ	Դասընթացի նպատակն է մատուցել ուսանողներին գիտելիքներ 1. Աշխարհի գոյության հիմնական սկզբունքների (Օնտոլոգիա և մետաֆիզիկա), մարդկային հասարակության բնույթի, էության ու զարգացման օրինաչափությունների (Սոցիալական

	<p>փիլիսոփայություն և պատմության փիլիսոփայություն), մարդուն աշխարհում նրա գոյության խնդրի (Մարդաբանական փիլիսոփայություն), մարդկային ճանաչողության հիմնախնդիրների (Գնտալոգիա) վերաբերյալ հիմնարար գիտելիքներ:</p> <p>2. Ծանոթացնել հայտնի փիլիսոփաների կյանքին ու գործունեությանը, նրանց թողած գիտական ժառանգությանը, փիլիսոփայության մեջ կատարած նորամուծություններին, գալիք սերնդիների գիտական ու փիլիսոփայական մտքի վրա նրանց թողած ազդեցությանը:</p> <p>3. Ցույց տալ աշխարհի փիլիսոփայական, կրոնական և գիտական պատկերների, գիտական իմացության էմպիրիկ աստիճանի, գիտական իմացության տեսական աստիճանի փոխհարաբերությունը:</p> <p>4. Հաղորդակից դարձնել ճշմարտության, գեղեցկության, բարի, գեղեցիկի, վսեմի, ազատության ու պատասխանատվության բարձր գաղափարներին:</p> <p>5. Սովորողի մեջ դաստիարակել հմտություններ՝ արդի ինֆորմացիոն հասարակության զարգացման հիմնական օրինաչափությունները հասկանալու, այդ հասարակության մեջ իր տեղն ու դերը գտնելու համար:</p>
ԽՆԴԻՐՆԵՐ	
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	<p><i>Իմանա</i></p> <p>Դասընթացն իր մեջ ներառում է փիլիսոփայության պատմությունը և փիլիսոփայության մարդաբանությունը, իմացաբանությունը և գոյաբանությունը, գիտության, մշակույթի ու բարոյականության փիլիսոփայությունը:</p> <p>Փիլիսոփայության դասընթացի նպատակն է Չարգացնել ապագա ուստիկանի ու նաև իրավաբանի մտածողությունը: Փիլիսոփայությունը համաշխարհային մտածողության ձև է, նրա առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն սովորեցնում է աշխարհը, մարդուն և հասարակությանը զգալ, նրա մասին մտածել ու գնահատել անկանխակալ եղանակով: Այս գիտությամբ կարող են զբաղվել ցանկացած բնագավառի մասնագետներ: Այս դասընթացի նպատակն է ընդլայնել ուսանողների մտահորիզոնը և օգնել հաղթահարելու մասնագիտական սահմանափակությունը և երկարամյա միևնույն</p>

	<p>աշխատանքային միջավայրում մասնագետի ,դեֆորմացմանը: Փիլիսոփայության նպատակն է սովորեցնել քննադատական մոտեցում ցուցաբերել այն երևույթների հանդեպ, որոնք արտաքուստ հասկանալի ու մատչելի են թվում: Այն սովորեցնում է ամբողջը մասնատել, մասերն ամբողջացնել, վերլուծել պատճառահետևանքային կապերը, հաղթահարել կարծրացած պատկերացումները, և վերջապես սովորեցնում է դրսևորել ստեղծագործական ունակություն:</p> <p><i>1. Տիրապետի և կարողանա</i></p> <p>Դասընթացը յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա</p> <ol style="list-style-type: none"> 1. Իմանալ /անցած դասընթացի շրջանակներում/ փիլիսոփաների անունները և նրանց ստեղծագործելու ժամանակաշրջանը: 2. Տարբերակել աշխարհճանաչողության եղանակները 3. Տարբերակել փիլիսոփայական ուղղությունները 4. Ինքնուրույն վերլուծել փիլիսոփայական ասույթները 5. Ցույց տալ թե որ փիլիսոփայի մտքերին է հարում, և որին քննադատորեն է մոտենում 6. փորձել ինքնուրույն փիլիսոփայական մտքեր ձևավորել
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Հիմնական	<p><u>Գրականություն</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Փիլիսոփայություն - ANAU library 2. http://library.anau.am/images/stories/grqer/Dasagrqer/Zaqaryan_PHIL.pdf /Զաքարյան/ 3. http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/pil-patmutyun.pdf /Ասմուս/ 4. http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/Kanke-Pilisopayutyun.pdf /Կանկե/ 5. http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/GIT_PHIL_DASAXOSUTYUNNER.pdf /Գևորգյան,/ 6. http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/Philosophy.pdf /Ասատրյան Մ./ 7. http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/Xachatryan_Phil.pdf /Խաչատրյան/
ՕԺԱՆԴԱԿ	1. http://library.anau.am/images/stories/grqer/Dasagrqer

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	<p>er/Hakobyan.pdf /Հակոբյան/ 2. http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/Kyurexyan.pdf /Կյուրեղյան/ 3. http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/Mirzoyan.pdf /Կառավարման փիլ. 4. http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/sargsyan-phil.pdf 5. http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/kesoyan.pdf /Կեսոյան/ 6. http://www.mayrhayastan.am/doc/arm/pdf%20grqer/NZHDEH%20GAREGIN%20Hatyntir.pdf /Նժդեհ/ 7. Պլուտարքոս, Երկեր, Եր., 1987: 8. Դավիթ Անհաղթ, Երկեր, Եր., 1980: 9. Ֆրիդրիխ Նիցշե, Այսպես խօսեց զրադաշտը, Եր., 1990: https://drive.google.com/file/d/0BxvlyYVJ89j3eVVwSkdrbGltZmM/view?pref=2&pli=1 10. Ֆրիդրիխ Նիցշե, Բարուց և չարից անդին, Չաստվածների մթնշաղ, փիլիսոփայական երկեր, Եր., 1992: 11. Դ. Դիդրո, Փիլիսոփայական և գեղագիտական երկեր, Եր., 1963: 12. http://abcd.am/new_abcd/ Մովսես Խորենացի ,Հայոց պատմություննե 13. http://abcd.am/new_abcd/ Գրիգոր Նարեկացի «Մատյան ողբերգության»</p>	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱՊԻՏՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	<p>ՔՆՆՈՒԹՅՈՒՆ Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1) Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2`) Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն` առկայության դեպքում)</p>	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	<p>Գնահատման արդյունարար միավոր</p> <p>18-20</p> <p>13-17</p> <p>8-12</p> <p>0-7</p> <p>0</p>	<p>Գնահատականը տառանշումով</p> <p>Գերազանց</p> <p>Լավ</p> <p>Բավարար</p> <p>Անբավարար</p> <p>Չներկայացած</p>
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ. ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	<p>Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (20 միավոր) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի</p>	

	<p>արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա:</p> <p>Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:</p> <p>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են ,Գերազանցե, ,Լավե, ,Բավարարե և ,Անբավարարե կամ ,Ստուգվածե կամ ,Զստուգվածե:</p> <p>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) ,Գերազանցե, եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային՝ փիլիսոփայության պատմության ու տեսության նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ շարադրում այն, եթե ունկնդիրը ոչ միայն հասկանում է, այլև զգում է փիլիսոփայության էությունը: Վերլուծում է աշխարհայացքային մտածողությունը, փիլիսոփայական ասույթները, անցկացնում է զուգահեռներ տարբեր դարաշրջանների փիլիսոփայական մտածողությունների միջև: Բացի ծրագրային նյութից ունի նաև սեփական փիլիսոփայական մտորումներ:</p> <p>բ) ,Լավե, եթե սովորողը գիտի հիմնականում գիտի ծրագրային նյութը, փիլիսոփայության պատմությունը, տեսությունը, գոնե դասախոսության շրջանակներում, գրագետ է և ըստ էության շարադրում է իր մտքերը, բայց թույլ է փիլիսոփայական մտքերի վերլուծությունից:</p> <p>գ) ,Բավարարե, եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութի գոնե կեսը, շարադրում է միտքը կարճ, տալիս է տեղեկություն փիլիսոփայի անվան, դարաշրջանի, ու նրանց որոշ մտորումների մասին:</p> <p>դ) ,Անբավարարե, եթե սովորողը ընդհանրապես չգիտի ծրագրային նյութը, և պատկերացում էլ չունի թե ինչ պետք է իմանար գոնե մասամբ:</p>
<p>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:</p>
<p>Ներկայություն</p>	<p>Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում</p>

	հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ	Ընթացիկ ստուգումն անցկացնել գրավոր աշխատանքով, մեկ դասաժամում շարադրելով ծրագրային նյութին վերաբերող թեմաներից որևէ մեկի մասին, ըստ ցանկության, գրառելով նաև ինքնուրույն դատողություններ ու տեսակետներ:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՈՒՄ

<p>ԹԵՄԱ 1 ԻՆՉ Է ՓԻԼԻՍՈՓՈՍՈՒԹՅՈՒՆԸ 4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 1 Ինչ է փիլիսոփայությունը: Փիլիսոփայության ինքնատիպությունը: Փիլիսոփայության գիտական կողմնորոշումը: Փիլիսոփայության աշխարհայացքային և մեթոդաբանական գործառույթները:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. Ինչ է փիլիսոփայությունը 2. Փիլիսոփայություն, գիտություն, մշակույթ 3. Փիլիսոփայության աշխարհայացքային և մեթոդաբանական գործառույթները: 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԴԱՍ 2 Փիլիսոփայության զգայական-էսթետիկական կողմնորոշումը: Փիլիսոփայության պրակտիկ-բարոյական կողմնորոշումը: Աշխարհի կրոնական, գիտական ու փիլիսոփայական պատկերների փոխհարաբերությունը:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. Փիլիսոփայության զգայական-էսթետիկական կողմնորոշումը: 2. Փիլիսոփայության պրակտիկ-բարոյական կողմնորոշումը: 3. Աշխարհի կրոնական, գիտական ու փիլիսոփայական պատկերների փոխհարաբերությունը: 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>

<p>ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ 4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 3 Միլեթյան դպրոցը: Պյութագորեսի դպրոցը: Հերակլիտը և էլեցիները: Ատոմիստներ՝ Լևկիպ, Դեմոկրիտ: Սոփեստները և Սոկրատեսը:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. Անտիկ փիլիսոփայություն. Միլեթյան դպրոց, 2. Անտիկ փիլիսոփայություն, Պյութագորասի դպրոց 3. Անտիկ փիլիսոփայություն. Հերակլիտը և էլեական դպրոցը 4. Անտիկ փիլիսոփայություն. Ատոմիստներ. Լևկիպ և Դեմոկրիտ 5. Անտիկ փիլիսոփայություն. Սոկրատես դպրոցը, Սոփեստներ 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԴԱՍ 4 ԱՆՏԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ /շարունակություն/ Պլատոնն ու Արիստոտելը: Վաղ հելլենիզմ /մթա 336-280/, Դասական հելլենիզմ /մթա 280-220/, ուշ հելլենիզմ /մթա 220-30/: Նեոպլատոնիզմ, վաղ շրջան մթ 2-3 դդ՝ Պլուտարքոս, միջին շրջան 3-4 դդ, ուշ շրջան՝ սխոլաստիկական շրջան 4-5 դդ: Սխոլաստիկական շրջան 4-6 դդ՝ Խորենացի</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. Անտիկ փիլիսոփայություն. Պլատոն, 2. Անտիկ փիլիսոփայություն Արիստոտել 3. Նեոպլատոնականություն 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԹԵՄԱ 3 ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ /5-15 դդ/ 4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 5 Աստվածակենտրոնություն: Միաստվածություն: Աստված: Բացարձակ անձնավորություն: Քրիստոսի պատվիրանների փիլիսոփայական իմաստը: Հայ Նեոպլատոնականություն-Սովսես Խորենացի /մոտ 410-490/, Դավիթ Անհաղթ(մոտ450-?),</p>	

<p>Թեմայի հարցերը</p> <p>1. Աստվածակենտրոնություն: Միաստվածություն: Աստված: Բացարձակ անձնավորություն: 2. Հայ Նեոպլատոնականություն-Մովսես Խորենացի /մոտ 410-490/, 3. Դավիթ Անհաղթ(մոտ450-?),</p>	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԴԱՍ 6</p> <p>Կրեացիոնիզմ, պրովիդենցիալիզմ, սիմվոլիզմ: Միջնադարյան հերմենևտիկա: Ռեալիզմ և նոմինալիզմ: Տիեզերական վարդապետ՝ Աստվածաբան-Նարեկացի/951-1003/ ,Մատյան ողբերգության:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <p>1. Կրեացիոնիզմ, Պրովիդենցիալիզմ 2. Միջնադարյան փիլիսոփայություն.Միմվոլիզմ, 3. Միջնադարյան հերմենևտիկա 4. Միջնադարյան փիլիսոփայություն. Ռեալիզմ և նոմինալիզմ 5. Գրիգոր Նարեկացի</p>	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p align="center">ԹԵՄԱ 4 ՎԵՐԱԾՆՆԴԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ /15-17 դդ 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 7</p> <p>Մարդակենտրոնությունը վերածննդի փիլիսոփայության սկզբունք: Մարդը որպես արարիչ, գեղագետ: Հումանիզմ: Նիկոլայ Կուլանսկու /1401-1464/ փիլիսոփայությունը: Ջորդանո Բրունոյի /1548- 1600/ փիլիսոփայությունը: Պանթեիզմ:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <p>1. Միջնադարյան փիլիսոփայություն. Միաստվածություն, 2. Վերածննդի փիլիսոփայություն. Մարդակենտրոնություն, Հումանիզմ 3. Վերածննդի փիլիսոփայություն. Կուլանսկու փիլիսոփայությունը, 4. Վերածննդի փիլիսոփայություն Ջորդանո Բրունոյի փիլիսոփայությունը</p>	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p align="center">ԹԵՄԱ 5 XVII ԴԱՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար</p>	

<p>ԴԱՍ 8</p> <p>Ֆրենսիս Բեկոնի /1561-1626/ փիլիսոփայությունը: Դեկարտի /1596-1650/ փիլիսոփայությունը: Նոր իրավական աշխարհայացքի մշակումը: Լոկի փիլիսոփայության իրավական գաղափարները: Լայբնիցի փիլիսոփայությունը: Լոկի և Լայբնիցի բանավեճը իմացության տեսության հարցերի շուրջ:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. XVII դարի փիլիսոփայություն. Ֆրենսիս Բեկոն, 2. XVII դարի փիլիսոփայություն Ռենե Դեկարտ 3. XVII դարի փիլիսոփայություն. Ջոն Լոկկ, Գոթֆրիդ Լայբնից 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԹԵՄԱ 6</p> <p>XVIII ԴԱՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓՈՒԹՅՈՒՆ</p> <p>2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 9</p> <p>Ֆրանսիական լուսավորության փիլիսոփայությունը, Վոլտեր, Ռուսո, Հոլբախ, Մոնտեսքյո:</p> <p>Գերմանական լուսավորության փիլիսոփայությունը, Կանտ, Ֆիխտե:</p> <p>Հայկական լուսավորության փիլիսոփայությունը, /Մադրասում և Վենետիկում/:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. XVIII դարի փիլիսոփայություն. Ֆրանսուա Վոլտեր. 2. XVIII դարի փիլիսոփայություն. Ժան Ժակ Ռուսո. 3. XVIII դարի փիլիսոփայություն. Պոլ Անրի Հոլբախ 4. XVIII դարի փիլիսոփայություն. Մոնտեսքյո <ol style="list-style-type: none"> 1. Գերմանական լուսավորության փիլիսոփայությունը, Կանտ, 2. Գերմանական լուսավորության փիլիսոփայությունը, Ֆիխտե: 3. Հայկական լուսավորության փիլիսոփայությունը, /Մադրասում և Վենետիկում/: 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>I մաս</p>	

<p>ԹԵՄԱ 7 XIX ԴԱՐԻ ՓԻԼԻՍՈՓՈՒԹՅՈՒՆ 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 10 Գեորգ Վիլհելմ Հեգելի /1770-1831/ փիլիսոփայությունը: Ֆոյերբախի մարդաբանական մատերիալիզմը: Մարքսի դիալեկտիկական մատերիալիզմը:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. XVIII դարի փիլիսոփայություն. Գեորգ Հեգել 2. XIX դարի փիլիսոփայություն Լյուդվիգ Ֆոյերբախի մարդաբանությունը 3. XIX դարի փիլիսոփայություն Կարլ Մարքսի դիալեկտիկական մատերիալիզմը 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԹԵՄԱ 8 XIX-XX ԴԱՐԻ ՓԻԼԻՍՈՓՈՒԹՅՈՒՆ 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 11 Կյանքի փիլիսոփայությունը Եվրոպայում: Արթուր Շոպենհաուեր /1788-1860/, Ֆրիդրիխ Նիցշե /1844-1900/: Էքզիստենցիալիզմ: Ազատ կյանքի փիլիսոփայությունը և ազգային-ազատագրական կյանքի փիլիսոփայությունը հայոց մեջ: Անրի Բերգսոն /1859-1941/: Կամքի՝ բնագոյի փիլիսոփայությունը հայ ազգային կեցության մեջ: Հուսեռլի /1859-1938/Ֆենոմենոլոգիան: Հերմենևտիկա: Լեզվաբանական փիլիսոփայություն: Վերլուծական փիլիսոփայություն՝ Գրեգե, Ռասսել, Վիտգենշտայն: Տրամաբանական պոզիտիվիզմ: Վիտգենշտայնի լեզվաբանական փիլիսոփայություն:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. XIX դարի փիլիսոփայություն. Կյանքի փիլիսոփայություն. Արթուր Շոպենհաուեր, 2. XIX դարի փիլիսոփայություն. Կյանքի փիլիսոփայություն. Ֆրիդրիխ Նիցշե 3. XX դարի փիլիսոփայություն. Էքզիստենցիալիզմ. Մարտին Հայդեգեր 4. XIX դարի փիլիսոփայություն, Կյանքի փիլիսոփայություն. Անրի Բերգսոն 5. XX դարի փիլիսոփայություն. Ֆենոմենոլոգիա. Էդմունդ Հուսեռլ 6. XX դարի փիլիսոփայություն. Հերմենևտիկա. 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>

<p>Տրիդրիխ Շլաերմախեր Վերլուծական փիլիսոփայություն</p>	
<p>ԹԵՄԱ 9 ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ 4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 12 Մարդու բնության փիլիսոփայություն: Մարդու հոգեկան ֆունկցիաների բնույթը, աշխարհի ճանաչման ունակությունը: Զգայական իմացություն, հիշողություն, երևակայություն: Ռացիոնալ իմացություն; Մտածողություն: Զգայական և ռացիոնալ իմացության միասնությունը: Ստեղծագործություն: Ինտուիցիա:</p>	
<p>Թեմայի հարցերը 1. Մարդու բնության փիլիսոփայություն 2. Աշխարհի ճանաչման էմպիրիստական տեսություն 3. Աշխարհի զգայական իմացություն, հիշողություն և երևակայություն 4. Ռացիոնալ իմացություն. Մտածողություն 5. Ստեղծագործություն, ինտուիցիա ճանաչման ռացիոնալիստական տեսություն</p>	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԴԱՍ 13 ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ Գիտակցականը, անգիտակցականը, ենթագիտակցականը, վերգիտակցականը: Տրոյդիզմ: Ին՝չ է ճշմարտությունը: Բացատրություն, ներզգացողություն, մեկնաբանություն, ըմբռնում: Արժեք, փիլիսոփայությունը որպես արժեք: Զգացմունքներ: Կամք: Հավատ: Իդեալ:</p>	
<p>Թեմայի հարցերը 1. Անգիտակցականը, գիտակցականը, վերգիտակցականը 2. Ին՝չ է ճշմարտությունը 3. Արժեք, փիլիսոփայությունը որպես արժեք</p>	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԹԵՄԱ 10 ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար</p>	

<p>ԴԱՍ 14</p> <p>Լեզվի փիլիսոփայություն, լեզուների բազմազանությունն ու միասնությունը: Մետալեզու, լեզուների նշանային ձևերը: Ձևայնացված լեզու: Փիլիսոփայությունը որպես լեզու:</p> <p>Մշակույթ և քաղաքակրթություն, նրանց տարբերությունը: Էսթետիկա, գեղեցիկը, վսեմը: Պրակտիկայի փիլիսոփայություն: Առաքինությունների էթիկան, պարտքի էթիկան, արժեքների էթիկան: Անձնավորություն, նրա ազատության ու պատասխանատվության հարցը: Ճշմարտության, գեղեցկության, և բարու միասնությունը: Կրթություն և դաստիարակություն:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. Լեզվի փիլիսոփայությունը, Փիլիսոփայության լեզուն 2. Ձևայնացված լեզու: 3. Մշակույթներ ու քաղաքակրթություններ 4. Էսթետիկա: գեղեցիկը, վսեմը 5. Անձնավորություն, ազատություն, պատասխանատվություն 6. Ճշմարտության, գեղեցկության և բարու միասնությունը 7. Կրթություն և դաստիարակություն 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԹԵՄԱ 11</p> <p>ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ</p> <p>2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 15</p> <p>Հասարակության բնույթի ըմբռնման ուղիները: Սոցիալականը: Հասարակության կառուցվածքը: Հնարավոր է արդյոք հասարակության մասին գիտություն: Ռացիոնալի և զգայականի դերը հասարակության զարգացման մեջ: Պատմության փիլիսոփայություն: Կեցության փիլիսոփայություն</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. Հասարակության բնույթն ու կառուցվածքը 2. Կեցության փիլիսոփայություն անտիկ շրջանում 3. Կեցության փիլիսոփայություն միջնադարում 4. Կեցության փիլիսոփայություն վերածննդի ժամանակաշրջանում 5. Ժամանակակից կեցության փիլիսոփայություն 6. Պատմության փիլիսոփայություն 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>ԹԵՄԱ 12</p> <p>ԲՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ</p> <p>2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար</p>	

<p>ԴԱՍ 16</p> <p>Մարդու և բնության հարաբերությունը: Տիեզերքի առաջացումն ու կառուցվածքային մակարդակները: Տարածություն և ժամանակ: Էկոլոգիական փիլիսոփայություն:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. Մարդու և բնության հարաբերությունը: 2. Տիեզերքի առաջացումն ու կառուցվածքային մակարդակները: 3. Տարածություն և ժամանակ: 4. Էկոլոգիական փիլիսոփայություն: 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p align="center">ԹԵՄԱ 13</p> <p align="center">ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ, ՄՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ</p> <p align="center">2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար</p>	
<p>ԴԱՍ 17</p> <p>Ինչ է գիտությունը: Գիտական իմացության էմպիրիկ աստիճանը: Գիտական իմացության տեսական աստիճանը: Տեսական մեթոդների դերը գիտությունների զարգացման մեջ:</p> <p>Տեխնիկայի առաջացումը և բնույթը: Տեխնիկայի փիլիսոփայությունը:</p> <p>Մարդը և ինֆորմացիան: Մարդը ինֆորմացիոն հասարակության մեջ: Մարդը տիեզերքում: Մարդկությունը գլոբալ պրոբլեմների առաջ:</p>	
<p>Թեմայի հարցերը</p> <ol style="list-style-type: none"> 1. Ինչ է գիտությունը: 2. Գիտական իմացության տեսական և պրակտիկ աստիճանը: 3. Տեխնիկայի առաջացումը և բնույթը: Տեխնիկայի փիլիսոփայությունը: 4. Մարդը և ինֆորմացիան: Մարդը ինֆորմացիոն հասարակության մեջ: 5. Մարդը տիեզերքում: Մարդկությունը գլոբալ պրոբլեմների առաջ: 	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>